



«ԹՈՂ ՏՈՒՆԵ ՄԱՆԵ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՉԻ ԳԱՆ» : ՂՈՒԿ. ԺԸ. 16:

Հ Ա Տ Ո Ր Ե .

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ . ՓԵՏՐՈՒՍՐ 1 . 1876 .

ԹԻ 2



ՄԱՍԱԿ ԱՌԻԹ ՄԸ ԵՒ ԿՈՐԻՆՆԵՐԸ

**ԱՌԻԹՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ Մ Է Զ**

Այս առիւծներն ոչ թէ անառի մէջ, այլ մեծ քաղաքի մը մէջ անոնց համար շինուած յատուկ բնակարանի մը մէջ են. թէև անոնք այս բնակարանին մէջ բանաարկուած են, սակայն կ'երևի թէ ըստ բաւականին հանգիստ են: Առիւծի կորիւնները կառուի ձա-

գերուն պէս կը խաղան, և անոնց մայրերը զանոնք կը դիտեն: Մատակ առիւծը միշտ շատ կը սիրէ իր կորիւնները, և եթէ մէկը զանոնք գողնայ կամ անոնց վնաս մը ընէ, սաստիկ կը բարկանայ, և ամէն կերպ վտանգի կը դիմադրուէ իր ձագերն ազատելու համար: Ափրիկէի մէջ Անգղիացի նաւաստի մը անտառ մը

գնաց պտտելու. հոն մատակ առիւծի մը հանդիպելով շատ վախցաւ: Խեղճ նաւաստին չէր կրնար փախչիլ և ազատիլ: Առիւծն եկաւ անոր քով կայնեցաւ. ասոր վրայ նաւաստին սուկումը զարմանքի փոխուեցաւ, և չորս դին նայելով տեսաւ որ մեծ կապիկ մը իր գրկաց մէջ երկու առիւծի կորիւն առած և ծառի մը վրայ նստած է: Նաւաստին ասկէ հասկցաւ որ առիւծն իրմէ օգնութիւն խնդրելու եկած է: Առիւծը ծառը կը դիտէր միշտ այնպէս, ինչպէս կատու մը կը դիտէ թռչունը զոր որսալ կ'ուզէ: Նաւաստին չէր կրնար ծառին վրայ ելլել, ուստի որոշեց ծառը կտրել: Բարեբախտաբար հետը կայցին մը ունէր, և կացինով յաջողեցաւ ծառը կտրել: Երբ ծառը դետին տապալեցաւ առիւծն իսկոյն կապիկին վրայ նետուելով զայն յօշոտեց, և իր կորիւնները լիզել սկսաւ: Քիչ մը ետքը եկաւ նաւաստին ձեռքերն և ոտքերն ալ լիզեց իր շնորհակալիքը յայտնելու համար. ապա կորիւններն առաւ և անտառին մէջ աներևոյթ եղաւ: Նաւաստին ալ իր նաւը դարձաւ, և այս գէպը որ բախու թեամբ պատմեց իր ընկերոջ:

Տղայոց Աւետարների համար

**ԱՌԱՆՑ ԽՍԵՆԼՈՒ ՍՏԵԼ**

Վարժապետ մը իր աշակերտներէն աղջկան մը, «Ա՛հ, Մարիամ, որչափ կը ցաւիմ որ սուտ խօսեցար» ըսաւ: Աղջիկն անոր, «Սուտ խօսեցա՞ր, կ'ըսես, մինչդեռ ես բերնէս խօսք մ'անգամ չհանեցի» ըսաւ: Վարժապետն ըսաւ, «Այո, դիտեմ որ բերնէդ խօսք չհանեցիր. սակայն գործով Աստուծոյ

առջև ստեղծելու Ինչպես որ մարդ խօսքով կը ստէ, այնպէս ալ գործքով կը ստէ. և Աստուած մարդու սիրտը կը քննէ»։ Մարիամ ամօթէն սկսաւ վար նայել, և վարժապետը տեսնելով որ աղջիկը քարէ տախտակին վրայ արտասուք կը թափէր, անոր ըսաւ, «Հիմա գրեզ կը համոզեմ որ սուտ խօսեցար։ Աննա իր ընկերաց հետ դասը հեղեղու համար երբ տեղէն ելաւ ու մէջտեղը եկաւ, իր գիրքը գրասեղանին վրայ թողուց։ Դուն ալ քու գիրքդ տունը մտցած ըլլալով, անոր գիրքըն առիր որ դասը սորվիս, և տքը դիպուածով գրքին վրայ մեղան թափեցաւ, և դուն վախնալով թէ Աննա քեզ պիտի բարկանայ, գիրքը գոցեցիր և Լուսիային գրասեղանին վրայ գրիր։ Աննա դասը լինցնելէն ետքը, երբ իր տեղը դարձաւ և իր գիրքը հարցուց, դուն անոր պատասխան չտուիր, և այնպէս ձեռքդ սեղծելով թէ անոր գրքին ուր ըլլալը չես գիտեր, մանաւանդ աւելի ուշադրութեամբ գործիդ պարապելով, աչքդ շարունակ կտրիդ վրայ տնկած բնաւ չորս կողմէ չէիր նայիր, և Աննային խօսքերը չսեղծու կը զարնէիր։ Վերջապէս Աննա իր գիրքը Լուսիային գրասեղանին վրայ գտնելով, «Վարժապետ, գիրքս ահա Լուսիային քովը գտայ, շնորհք բրէք անոր ըսէք որ իր գիրքը գործածէ՛, ըսաւ և գիրքն առաւ։ Աննա իր գիրքին վրայի արատը երբ տեսաւ, գիտես, որչափ ցաւեցաւ։ Աննա մաքրասէր և զգուշաւոր աղջիկ է. ուստի կ'աշխատի իր բոլոր բաները մաքուր պահել, և իր մաքուր գիրքն ազոտտած տեսնելով չկրցաւ իր ցաւը զսպել և ամենուն առջև լալ սկսաւ։ Դուն տեսար որ ան կուրար և Լուսիան կը յանդիմանէր, և լսեցիր նաև որ Լուսիա կ'ըսէր. «Այս արատն ես չըրի, գրքիդ հոս ըլլալն ալ չէի գիտեր՝, բայց այս ամենուն վրայ բան մը չըսիր։ Դուն այս միջոցը բռնեցիր որ քու վրադ չտարակուսինք. սակայն ըրածդ ստախօսութիւն չէր։ Աստուած քու սիրտդ կը ճաննայ, ուստի այս ըրածդ ստախօսութիւն չհամարեց»։

Մարիամ սկսաւ լալ և ըսել, «Չէի գիտեր որ ըրածս այնչափ դէշ բան է, այսուհետև այնպիսի բան չեմ ընէր»։ Ասոր վրայ վարժապետն ըսաւ, «Ես ալ այնպէս կը յուսամ սիրելի աղջիկս,

ահա կը տեսնես որ բերնէդ առանց խօսք մը հանելու սուտ խօսած եղար։ Եթէ ուղղակի Աննային պատասխան տայիր, «Ես չըրի՛ պիտի ըսէիր, այնպէս չէ՛, ահա քու գործէդ մենք այնպէս հակցանք։ Կը կարծես թէ գործով սուտ խօսիլն Աստուծոյ առջև խօսքով ստեղծն նուազ մեզք է։»



ՀԱՅԻ ՊՏՈՒՂ

Ժամանակու փոքր իշխանուհի մը կար, որուն ըսուեցաւ թէ ժողովուրդը հաց չունենալուն համար սովէն կը տանջուէր։ Իշխանուհին աւելի տեղեկութիւն ունէր քան թէ արքայութեան վրայ. ուստի աչքերը խոշոր խոշոր բանալով ըսաւ. «Եթէ հաց չունին, ինչու համար դեռ չեն ուտեր»։

Ես ալ դրբի մը մէջ կարդալով թէ կան ծառեր որոց վրայ հաց կը բուսնի, և կան ուրիշ ծառեր որոցմէ կաթ կը վազէ, ինքիւրենս ըսի. «Ինչպէս կրնայ ըլլալ որ այն երկրին բնակիչներն անօթի կամ ծարաւ ըլլան», և յիշեցի այն փոքր իշխանուհին։

Եթէ կ'ուզէք որ հացն ինքնին բուսնի, պէտք է որ երթաք Խաղաղական օվկիանոսի այն կղզիներն ուր վերի պատկերին մէջ տեսնուած տարօրինակ մարդիկ կը բնակին։ Հացի ծառերը կաղնոյ ծառերու չափ բարձր են, և անոնց պտուղը կիտրոսի չափ մեծ է և կիտրոսի պէս գեղին կեղև ունի։

Մարդիկ ամէն օր թարմ թարմ կը ժողովեն այն պտուղն և իրենց ամալ յատակը ծակ մը կը բրեն (վան զի անոնց առնները տախտակամած չունին) և կրակ վառելով այնչափ կ'եփեն այն պտուղը որ կը սեւնայ։ Ետքը, երբ այնչափ կը պղզի որ առանց ձեռքերնին այրելու կրնան զանի բռնել, այ-

րած մասը կը հանեն և մէջը կ'ուտեն։ Անտարակոյս դուք կը խորհիք թէ նոր տեսակ մը հաց է այն։ Այս պտուղը պէտք է ժողովել և եփել ամէն օր։ Բայց այնտեղի բնակիչները մանր կտորներու կը բաժնեն և արեւի մէջ կը չորցնեն զայն, որ պարսիմասի պէս կ'ըլլայ։ Որովհետև չորս ամիս հացի ծառը պտուղ չտար, մարդիկ այն ժամանակին համար չոր հաց կը համարեն, և այն հացը հողի մէջ թաղելով կը պահեն։ Հացի ծառէն տեսակ մը հիւթ կը վազէ, որմէ տեսակ մը ուռի կը շինուի։ Այսպէս միևնոյն ծառը թէ հաց և թէ հացին հետ ուտելու անուշեղէն կը մատակարարէ։

Բայց աւելի զարմանալի է Կոլմ ծառն որ կ'աճի հարաւային Ամերիկայի մէջ։ Այս ծառը կը բուսնի չոր և տաք երկրներու մէջ ուր քիչ անգամ անձրև կու գայ։ Ծառն ինքնին բոլորովին չոր երեւոյթ ունի, բայց երբ ամէն առաւօտ արեւը ծագելու առն մարդիկ դանակներով և շիշերով կ'երթան և ծառին կեղեւին վրայ փոքր ճեղքեր կը բանան, առաւ հիւթ կը վազէ անկէ։ Կ'ըսուի թէ շատ հիւթ կը վազէ ամէն ամսոյ ԱՅին, և քիչ ամսոյն վերջը։ Այս ծառերէն վազած հիւթին համը շատ կընմանի կաթի համին, և եթէ այս կաթնաման հիւթը քանի մը ժամ ամանի մը մէջ մնայ, երեսը թանձր սեր կը կապէ։ Սակայն զարմանալին այն է, որ այս ծառին կեղևն աղացուելով հաց կը շինուի, և մարդիկ իրենց հացն ու սերը միանգամայն միևնոյն ծառէն կ'առնեն։

Այս մարդիկ կ'ապրին այնպիսի երկրի մը մէջ ուր հացն ինքնին կը բուսնի, սակայն անոնք այն հացը պատրաստելու և պահպանելու համար աշխատելու են։ Վան զի Աստուծոյ օրէնքն է, որ չաշխատողը չի կրնար ուտել. այս օրէնքը կը վերաբերի թէ այն երկրին ուր հացն ինքնին կը բուսնի, և թէ այն երկրին ուր կ'ապրէր վերոյիշեալ իշխանուհին, որ չէր կրնար հասկնալ թէ ինչպէս մարդիկ անօթութենէ կը տանջուին։

ՄԱՐԿՈՍԻ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Մարկոսի հայրն Երուսաղեմէն փոխանակ Յոսպէ դառնալու և անկէ չոգենաւ նստելու, միտքը դրաւ ցա-

մաքի ճամբով Գամասկոս երթալ : Ասոր վրայ Մարկոս ուրախ եղաւ , վասնզի , եթէ օգը ցուրտ և անձրեւոտ ըլլայ , շոգեհասով ճամբորդութիւն ընող մարդը պաղէն կը դողդոջայ . իսկ եթէ օգը բաց և սոթակէզ ըլլայ , ճամբորդը տաքէն կ'այրի . կամ եթէ հովերն և աղիքները նաւը տարուբերեն , ծովու վրայ գրտնուողը շատ կը փափաքի ցամաք ելլելը : Մակայն ցամաքի վրայ ճամբորդ մը կրնայ հետի , և կամ ձիով կամ կառքով երթալ , ինչպէս որ կ'ուզէ . և եթէ հանգչիլ կ'ուզէ , տեղ մը կը կենայ : Թէև սաստիկ հովեր փչեն , ցամաքի վրայ մարդուն գրտելը չի դառնար և սիրաւ չի խառնուիր , բայց ծովու վրայ կ'ըլլան այս բաները : Մարկոս այսպէս խորհելով կ'ուրախանար որ իրենց ճամբորդութիւնը ցամաքէն պիտի ըլլար : Բայց ճամբորդութեան առաջին օրէն Մարկոս տեսաւ որ ցամաքային ճամբորդութիւնն ալ իր նեղութիւններն ունէր , վասն զի ջորեպանը , որ զՄարկոս և անոր հայրը պիտի տանէր , Մարկոսին համար փոխանակ էջ մը բերելու , ինչպէս որ խոստացած էր , ջորի մը բերաւ : Մարկոսի ջորին միւս ջորիներուն հետ չէր երթար , այլ ճամբէն դուրս կ'ելլէր երբեմն , և զառիպայր կամ խորտուբորտ տեղերէն կամ շատ արագ երթալով , և կամ յանկարծ կենալով , ինչաւր վտանգի մէջ կը դնէր զՄարկոս , որ այս պատճառաւ շատ կը վախնար : Անգամ մը ջորեպանը Մարկոսին քով եկաւ , և սաստիկ ծեծելով Մարկոսի շորին կ'ուզէր զայն սխալ ճամբէն դարձնել : Մարկոս վախնալով ուզեց քայլելով ետ դառնալ և ջորեպանն իջեցուց զՄարկոս ջորիէն : Այն իրիկունը որ ճամբորդները նապլուս հասան , Մարկոսին ջորին առուի մը մէջ կեցաւ , և զՄարկոս իր վրայ ունենալով պառկեցաւ ջորին մէջ : Ուստի Մարկոս խորհեցաւ որ շոգեհասով երթալը թերևս լուսագոյն եղած պիտի ըլլար : Նապլուսի մօտ Մարկոս և անոր հայրը տեսան այն ջրհորը որուն քով Բրիտանոս Սամարացի կ'նոջ հետ խօսեցաւ , և Մարկոսի հայրն ըսաւ անոր թէ , այն ջրհորը Յակոբ նահա-

պեա փորած էր : Նապլուսի մէկ կողմը տեսան Գերաղ լեռը , և միւս կողմը Գարիղին լեռը , որ քահանայք Մովսիսի օրհնութիւններն և անէծները կարդացին (Բ . Օր . Իէ և ԻԲ . և Յես . է) :

Երկրորդ օրը Մարկոսի ջորայն վրայ հայրը հեծաւ , և իր ձիուն վրայ հեծցուց զՄարկոս , բայց Մարկոս ձիուն վրայ հեծնելով աւելի դո՛հ չեղաւ . քանզի ձին ծեր էր , և այնչափ դանդաղ կը քայլէր որ Մարկոս ջանալով քայլեցնել ձին , շատ յոգնեցաւ , և անոր սրունքն ու բազուկները ցաւեցան :

առնելու համար եկաւ այն աղբիւրէն : Մարկոսի հայրն ըսաւ թէ շատ հաւանական էր որ Յիսուս ալ այն աղբիւրէն ջուր առաւ , վասնզի Յիսուս իր պատանեկութեան ատենը կը ծառայէր իր ծնողացը :

Մարկոս Սուրբ գրոց մէջ յիշուած այնչափ տեղերն անձամբ տեսնելով , նոր եւանգով սկսաւ Աստուածաշունչը կարդալ : Այս պատճառաւ կարծեմ թէ Մարկոս ուրախ եղաւ որ ծովով չեղաւ այն ճամբորդութիւնը :

Տղայոց Աւետարանի համար .

Խ Ղ Ճ Մ Տ Ա Ն Ք

Մայր մը յաճախ խղճմբտանքի վրայ կը խօսէր իր փոքրիկ աղջկանը , բայց սա միշտ կ'ըսէր որ ինչ բնաւ չղղար թէ խղճմանք ունի : Օր մը փոքրիկ աղջիկն իր հասակակից կարապետին հետ սանդուղին վրայ կը խաղար , և ահա մէկէն վաղեց , սենեակը մտաւ , և « Մայրիկ , մայրիկ , լսեցի , ես լսեցի զայն » ըսաւ : « Ինչ



ՆԱՋԱՐԵԹԻ ԱՐԲԻՐԸ

Բայց Մարկոս և հայրը այն օր ալ այնպէս երթալով , հետեւեալ օրը հասան Նապլուս , ուր երկու օր պիտի կենային հանգչելու համար : Ճամբան շատ տեղերէ անցան , որ յիշուած են Հին կտակարանին մէջ : Տեսան նաև Խորայէլի թագաւորաց արքայանիստ քաղաքը , Սամարիա , որ հիմա Սիպուսալիէ կ'ըսուի , և Թէլ Տօթան ըսուած տեղը ուր կար աղբիւր մը , որուն համար Մարկոսի հայրն ըսաւ թէ , շատ հաւանական է որ այս աղբիւրն այն աղբիւրներէն մէկն է , ուր Յովսեփոյ եղբայրներն իրենց ոչխարներուն ջուր կը խմեցնէին : Մեր ճամբորդները տեսան նաև Արաբացիներու կարաւան մը որ իրենց սեղաներովը դէպ ի հասաւ , եգիպտոս կ'երթային , և անոց դացած ճամբան այն ճամբան էր ուստի Խամայիլացիք Յովսեփոյ տարին : Ետք անոնք Նապլուսի գոյնն ուր տեղ Յիսուս ապրեցաւ իր աղայութեան ժամանակը : Մարկոս հան տեսաւ որ աղայք սափորներով կու գային աղբիւրէ մը ջուր առնելու , և կը խորհէր թէ արդեօք Յիսուս ալ իր պատանեկութեան ատենը ջուր

էր լսած դ , » հարցուց անոր մայրը : « Խղճիս ձայնը լսեցի » պատասխանեց աղջիկը : « Խիղճս ինձ խօսեցաւ , երբ կարապետ խղճ մը թիւն մը գտաւ , և զայն կտոր կտոր ընել կ'ուզէր . ես խղճիս ձայնը լսեցի , և կարապետին ըսի որ մը թիւն սպաննել դէշ բան է : »

Սուր վրայէն քանի մը տարի անցաւ , նոյն աղջիկն , որ տառը տարեկան եղած էր , քանի մը ընկերներու հետ աղթքի ժողով մը գնաց : Հոն բան մը տեսան որ անոնց ծիծաղը չարժեց : Բարեպաշտ և ծերունի կին մը անոնց խնդալը տեսաւ , և աղթքէն ետքը փոքրիկ աղջիկն իրեն կանչեց և այնպիսի առնել մը խնդալը սրչափ անվայել և սխալ բան ըլլալն անոր խոսցուց : Այս աղջկան խիղճը , որուն ձայնը նա լսած էր քանի մը տարի առաջ , բուրբովին լուս կեցած չէր : Երբ ծերունի կինն այս աղջկան սխալմունքն անոր երեսը զարկաւ , աղջիկն անմիջապէս հասկեցաւ : Այս բանին վրայ իր ընկերաց հետ խօսելով ըսաւ թէ , « Ես աւելի կը փափաքեմ որ Աստուծոյ Հոգւոյն օգնութեամբ մենք ամենքս ալ սրտէնք այսուհետև

Աստուծոյ հնազանդ զաւկներ ըլլալ»  
 Այն փորրիկ աղջիկը հիմա մեծ-  
 ցած և կին եղած է, և իր անյող-  
 գողգ արգարասիրութեանը համար  
 ամենէն կը յարգուի և կը սիրուի :

Խիղճն այն հեղիկ ձայնն է, զոր  
 Աստուած մեր ներսիդին գրած է,  
 որ մեր սխալմունքը մեզ իմացնէ :  
 Այս պատմութեան մէջ յիշուած փոր-  
 րիկ աղջիկն իր մօրը, «Ես լսեցի,  
 խղճիս ձայնը լսեցի» ըսաւ : Բայց  
 այն ձայնն իւր մարմնաւոր ականջնե-  
 րով չլսեց : Այն հեղիկ ձայնն անոր  
 սրտին խօսեցաւ :

Ընթերցող մանուկ, դուն ալ ա-  
 կանջ կը գնես այն քաղցր ձայնը լսե-  
 լու : Զգոյշ եղիւր պահել անոր բաժ-  
 ները, և ահա այն ատեն երջանիկ և  
 օգտակար կ'ըլլայ քու կեանքդ : Ե-  
 թէ անոր բաժնիները չպահես, Աս-  
 տուծոյ հաճելի չես ըլլար, այլ հա-  
 ճելի կ'ըլլաս այն «մանչոյ ատիւնի»  
 որ կը պարտի, ու կը փնտռէ թէ  
 ով կ'լլէ :

Ճածեն : Այս շուները վարժուած են  
 քաշել տեսակ մը դահուկ, որոյ վրայ կը  
 գրուին նամակի ծրարները, սուրհան-  
 դակն ալ անոր վրայ կը կենայ : Եթէ  
 հարցուի թէ ոստիկաններն ո՞ւր կընըս-  
 տին, կը պատասխանեմ թէ հոն ոս-  
 տիկաններ չկան. նախ վասն զի նա-  
 մակի ծրարներուն մէջ ստակ չի դըս-  
 նուիր, երկրորդ՝ վասն զի այն ցուրտ  
 երկրին մէջ աւազակ չկայ :

**ՓՈՒՔԻ ՏՂՈՒ ՄԸ ԽՕՄՔԸ**

Բուհամայի մայրը կտաւ է պէպէք  
 մը շինելով անոր տուած էր որ դրօս-  
 նու : Օր մը Բուհամա իր պէպէքը  
 գրկելով, «Ահ, գառնուկս, մի լար, ո՞հ,  
 մի լար» կ'ըսէր, և խաղալիկը գգուե-  
 լով կը համբուրէր : Բուհամայի մայրն,  
 որ գիրք մը կը կարդար, այս միջոցին  
 գիրքը վար գնելով իր աղջկան, «Բու-  
 համա, ես ալ չպիտի կարդամ, եթէ  
 ուզես կրնաս քովս  
 գալ» ըսաւ : Բուհա-  
 մա իր պէպէքը գետ-  
 նի վրայ թողոց,  
 վազեց գէպ ի մայրը  
 և զանի համբուրե-  
 լով, «Ահ, մայրիկս,  
 քեզ որչափ կը սի-  
 րեմ», ըսաւ : Մայրն  
 ալ «Բանի որ իմ սի-  
 րուն աղջիկս զիս կը  
 սիրէ, որչափ ուրախ  
 եմ», ըսաւ, և հար-  
 ցուց, «Բուհամա, զիս  
 կը սիրես, բայց պէ-  
 պէքդ ալ կը սիրես,  
 այնպէս չէ՞ Վերբեքս գիրքս կը կարդայի  
 տեսայ որ դուն զանի շատ կը սիրէիր  
 և կը գգուէիր» Աղջիկն ասոր պատաս-  
 խանեց. «Այո, քիչ մը ժամանակի հա-  
 մար անի ինձ շատ քաղցր եկաւ, բայց  
 ետքը ես անկէ ձանձրացայ» Մայրն  
 երբ հարցուց թէ «Ինչո՞ւ ձանձրացար»  
 Բուհամա, «Որովհետեւ ես զանի կը  
 սիրեմ, բայց ան չկրնար զիս սիրել»  
 ըսաւ : Մայրն ալ, «Ուրեմն զիս անոր  
 համար կը սիրես որ ես ալ քեզ կը  
 սիրեմ», հարցուց : Բուհամա, «Իմ քեզ  
 սիրելուս մէկ պատճառն աս է. բայց  
 ուրիշ . . .» ըսաւ : Մայրը, «Ուրիշ  
 ի՞նչ պատճառ ունիս», հարցուց : Բու-  
 համա, «Ուրիշ պատճառ ալ ունիմ.  
 երբ ես փոքր էի և չէի կրնար զքեզ  
 սիրել, դուն զիս կը սիրէիր, և ահա

այս պատճառաւ քեզ աւելի կը սի-  
 րեմ», ըսաւ : Մայրը մէկէն յիշեց Յով-  
 հաննէսի, «Մենք զանիկա կը սիրենք,  
 ինչու որ առաջ անիկա մեզ սիրեց»  
 խօսքը, և սկսաւ փառք տալ Աստուծոյ :

Տղայոց Աւետարտի համար

**ՍՈՒՐԲ ԳԻՐՔ ԿԱՐԴԱՅՈՂ ՓՈՒՔԻ  
 ՏՂՈՅ ՀԱՄԱՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ**

Հօր և չար թագաւոր մը, որ ոչ  
 Աստուծոյ և ոչ մարդոցմէ կը վախ-  
 նար, բանակաւ պարսպաւոր քաղաք  
 մը պաշարելու եկաւ : Թագաւորը  
 քաղքին պարիսպը դեռ պահած մը զըր-  
 կեց, որ բարձրաձայն խօսեցաւ, որ-  
 պէս զի աղեղնաւորք և բոլոր ժողո-  
 վաւրդը լսեն. և ըսաւ թէ երկնից  
 Աստուծա՛ր կարող պիտի չըլլայ քա-  
 ղաքն այն թագաւորին ձեռքէն ա-  
 զատել, և խոստացաւ քաղքին բո-  
 լոր բնակչաց ներել, եթէ անոնք  
 քաղքին դռները բանան : Պարսպին  
 ներսը գտնուող ժողովրդեան վախը  
 մեծ էր. բայց այն քաղաքին սիրող  
 բարի թագաւորն այս մեծ տագնա-  
 պին մէջ ապաւէն մ'ունէր : Աստու-  
 ծոյ աղաղակեց, և Աստուած, որ  
 միշտ իր ժողովրդեան կողմէն կը  
 պատերազմի, այն ամբարառան թա-  
 գաւորին բանակը զարկաւ և ջար-  
 գեց : Մահուան հրեշտակը գիշեր ա-  
 տեն չար թագաւորին բանակը մտաւ,  
 և առաւօտուն հարիւր ութսուն և  
 հինգ հազար զիակներ դաշտին մէջ  
 սփռեցան : Այն մեծ բանակը զօրու-  
 թեանց Տէրո՛վ հօր բազկին զօրու-  
 թեանէն սարսափած շփոթութեամբ  
 փախել սկսաւ :

Ո՛վ էր այն չար թագաւորը. որ  
 քաղաքը պաշարեց. պաշարուած քա-  
 ղաքին մէջ որ թագաւորը կը տիրէր :

**Ա. Ի. Ե. Տ. Ա. Բ. Ե. Բ ԳԻՆՆԵՐԸ**

ԱՄՍՍԱԿԱՆ (Հայերէն, Հ. Լ. Յ. Գրով Տաճկերէն  
 և Պոլսեցիերէն), փոսթայի ծախքով տարին 1/4  
 մէճ. 10 հատ, մէկ անձի ուղղուած, 2 1/2 մէճ. :  
 ՏԱՐԱԹԱԿԱՆ (Հայերէն, և Հ. Գրով Տաճկ.)  
 փոսթայի ծախքով տարին 1 1/2 արծ.  
 մէճ. 5 հատ, մէկ անձի ուղղուած, 6 1/4 մէճ. :  
 Անկէվաֆօրօս, տարին 1 արծ. մէճ. :

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն  
 Խմբագիր Չ. Ք. Կրին

**ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ**

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵՆ  
 Զագագրար, Յակոբեան խան, Թիւ. 12.



**Թ. Գ. ՍԱՐ ՇՈՒՆԵՐ**

Գուր ամէնքդ ալ տեսած էք նա-  
 մակ տանող սուրհանդակը (Բ-Բ) որ  
 իր ձիերը քաղաքին մէջէն վազցնելով  
 կ'անցնի, և սուրհանդակը սրաշողա-  
 ներու համար անոր հետ գացող ոս-  
 տիկանները, որ յոգնած կ'երթան  
 անոր ետեւէն : Այս պատկերին մէջ  
 ուրիշ տեսակ սուրհանդակ մը կը  
 տեսնուի : Այս սուրհանդակը ձմեռ  
 ատեն Գանատայի հեռաւոր կողմերն  
 Անդլիոյ կառավարութեան նամակ-  
 ները կը տանի : Այն երկրին մէջ շատ  
 տեղ ճամբայ չկայ, և գետինը ձիւնով  
 այնպէս կը ծածկուի, որ ձի չի կրնար  
 քաշել : Ուստի հոն սուրհանդակնե-  
 րը, փոխանակ ձիոյ, շուն կը դր-